Աշխատանքը, քրտնաթոր, ստեղծագործ աշխատանքը — ահա այն գերագոյն միջոցը, որով աշխատաւոր զանգուածները պիտի ազատուին, ըստ Բաֆֆիի, գոյութեան կռուի դաժան կապանքներէն եւ պիտի հասնին դալոց արդար ընկերային իրաւակարգի, որ պիտի լինի «մշակ մարդու արքայութիւնը», ուր այլեւս չպիտի լինի հարստահարութիւն եւ աշխատանքի չահագործում...

Կարդացէք այս տողերը «Կայծեր»ի Ա. հատորի մէջ)*

... Ես յիշեցի Հասոյի խօսքը. «Լաւ է աշխատել առանց վաստակի, քան թէ անգործ մնալ, անգործունէութիւնը մեռելներին է պատկանում»... Նրա սկիզբը եւ վախճանը մահ է: Որքան եւ ի զուր թափուած լինէր մշակի քրտինքը, որքան եւ յուսահատական լինէր նրա դրութիւնը, դարձեալ նա կենդանի մարդը, նա գործում է, նա պատերազմում է իր գոյութիւնը ոչնչացնող դժուարութիւնների հետ, նրա մէջ մեռած չէ ինքնապաշտպանութեան զօրութիւնը: Եւ այս կեանքի եւ մահու կռուի մէջ նա իրան պատրաստում է մի օրուան համար, երբ կը տիրեն իրաւունքը եւ արդարութիւնը, երբ կ'ազատուի *աղաների* հարստահարութիւնից: Այն ժամանակ կը գայ մշակ մարդու արքայութիւնը, այն մարդու, որ գործ ունի արդար եւ հաւատարիմ բնութեան հետ, որ չէ մտածում իր նման մարդերի քրտինքից իր համար ապրուստ քամել»...

Ուրիշ տեղ մը կը նկարագրէ հանգամանօրէն աւտտապետական դրութիւնը Պարսկաստանում եւ Թուրքիայում, հարկային աւերիչ սիստեմը, գիւղացու եւ աղայի փոխ-յարաբերութիւնները եւ դարձեալ ուշադրաւ խորհրդածութիւններ կ'ընէ ընկերային ապագայ կազմակերպութեան մասին.

... «Պարսիկ աղան, որպէս փէօդալական կալուածատէր, սեփականել է հողը եւ իր կառավարութեան բոլոր խորամանկութեամբ... քամում է գիւղացու ձեռքի վաստակը... Քուրդը յարձակել է հողը եւ ժամանակաւոր կերպով միայն շահում է նրանից... Մէկը խորամանկ հարստահարող է, միւսը մեծասիրտ ազազակ: Իսկ երկու դէպքում եւս տանջւում է, սպառւում է անբախտ գիւղացու կեանքը...

«Կարօն բացատրում էր ինձ այս բոլորը, նա ասում էր, թէ գիւղացու վիճակը կարող է աւելի բարւոք լինել, եթէ հասարակութիւնը ուրիշ ձեւով կազմակերպուած կը լինի: Նա ասում էր, թէ այն ժամանակ չարութիւն չի լինի, բոլոր մարդիկ բարի կը լինին, ամէնի ապրուստը ապահովուած կը լինի.— աղաների դարը կ'անցնէ, կը տիրէ միայն արդարութիւնը եւ իրաւունքը: Նա երկար ու երկար մեկնում էր, թէ ինչ ձեւով պէտք է հասարակութիւնը կազմակերպել, որ զօրեղն անզօրին չնեղէ, որ մշակ մարդու աշխատութեան վաստակը չխլեն... եւ ամէնի վրայ տիրէ հաւասարութիւնը»*)...

Բաֆֆին, ի հարկէ, չի խօսիր Ռուսահայաստանի նոյնօրինակ պայմաններու մասին. գրաքննիչն ալ, ցենզորը — անգութ «բօշնեցը», ինչպէս կ'ըսէր Գամառ-Բաթիպա իր ոտանաւորներէն մէկուն մէջ — ռուսական գրաքննիչը, բնականաբար, չէր արտօներ սոցիալական պայքարի, աշխատաւորութեան գալոց յաղթանակի եւ «մշակ մարդու արքայութեան» մասին, քան գրեր էր «Կայծեր»ի մեծ հրապարակագիրը. եւ անոր ընկերային աշխարհահայեացքը կը մնայ այդպիսով, տարաբախտաբար, վարագուրուած, մշուշապատ... Սակայն, մշուշի մէջ իսկ՝ կ'ընդնշմարուի արդէն քանի մը հիմնական դաղափարներու լուսեղէն ցոլքը...

Հակասութիւն պէտք չէ տեսնել «Կայծեր»ի երկրորդ հատորի) այս տողերու մէջ, ուր Ալանը բաղձանք կը յայտնէ, որ ազգը ունենար ժամանակաւորապէս ազնուական դասակարգ մը:*

«Ես իսկապէս հակառակ եմ ազնուականութեան գաղափարին, բայց կը ցանկանայի, որ հայերը ազնուականներ ունենային: Երբ ժողովուրդը զարգացած չէ, երբ նա դեռ մի որոշ գիտակցութեան չէ հասած, ազնուականութիւնը միշտ յարմար միջնորդ է դառնում նրա բողոքը արտայայտելու, երբ *ինքը՝ ազնուականութիւնը՝ նոյն ժողովուրդի հետ ճնշուած դը-*

*) *Էջեր* 216–217:

*) «*Կայծեր*», *հատ. Ա. էջ* 289–291:

*) *Էջ* 483